

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ 1999 թվականի դեկտեմբերի 16-ի  
1999/92/ԵՀ հրահանգ**

**Պայթյունավտանգ միջավայրից եկող պոտենցիալ վտանգի ենթարկվող աշխատողների  
անվտանգության ու առողջության պահպանության բարելավման նվազագույն  
պահանջների մասին (15-րդ առանձին հրահանգ՝ 89/391/ԵՏՀ հրահանգի 16(1)  
հոդվածի իմաստով)**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և,  
մասնավորապես, դրա 137-րդ հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1), որը ներկայացվել է  
Աշխատավայրում անվտանգության, հիգիենայի և առողջության պահպանման հարցերով  
խորհրդատվական կոմիտեի ու Արդյունաբերության հանքային և արդյունահանող այլ  
ճյուղերի գծով անվտանգության ու առողջության հարցերով հանձնաժողովի հետ  
խորհրդակցելուց հետո,

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (2),

Տարածաշրջանային հարցերով կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո,

գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածում նշված ընթացակարգի համաձայն, ելնելով  
Համաձայնեցման կոմիտեի կողմից 1999 թվականի հոկտեմբերի 21-ին հաստատված  
համատեղ տեքստից (3),

Քանի որ

1) Պայմանագրի 137-րդ հոդվածով նախատեսվում է, որ Խորհուրդը հրահանգների միջոցով  
կարող է ընդունել հատկապես աշխատանքային միջավայրի բարելավումը խթանելուն  
ուղղված նվազագույն պահանջներ՝ աշխատողների անվտանգության ապահովման և  
առողջության պահպանման ավելի բարձր մակարդակ ապահովելու նպատակով,

2) այդ հոդվածով սահմանված պայմանների համաձայն՝ նման հրահանգներով պետք է  
խուսափել վարչական, ֆինանսական ու իրավական այնպիսի սահմանափակումներ

սահմանելուց, որոնք կխոչընդոտեն փոքր և միջին ձեռնարկությունների ստեղծումն ու զարգացումը,

3) աշխատանքի անվտանգության, հիգիենայի և առողջության պահպանման նորմերի կատարելագործումը՝ որպես նպատակ, չպետք է ստորադասվի զուտ տնտեսական շահերին,

4) պայթյունավտանգ միջավայրից եկող պոտենցիալ վտանգի ենթարկվող աշխատողների անվտանգության ու առողջության պահպանության բարելավման նվազագույն պահանջների կատարումն էական նշանակություն ունի աշխատողների անվտանգության և առողջության պահպանությունն ապահովելու հարցում,

5) սույն Հրահանգը Խորհրդի «Աշխատատեղում աշխատողների անվտանգության և առողջության բարելավումը խթանելուն ուղղված՝ 1989 թվականի հունիսի 12-ի 89/391/ԵՏՀ հրահանգի 16(1) հոդվածի իմաստով առանձին հրահանգ է (4). Ուստի, նշված հրահանգի դրույթները, մասնավորապես աշխատողներին տեղեկություններ տրամադրելու, նրանց հետ խորհրդակցելու և նրանց կողմից մասնակցության, ինչպես նաև աշխատողների վերապատրաստման մասով լիովին կիրառելի են այն դեպքերի համար, երբ աշխատողները կարող են պայթյունավտանգ միջավայրից եկող պոտենցիալ վտանգի ենթարկվել՝ չսահմանափակելով սույն Հրահանգում պարունակվող առավել խիստ հատուկ դրույթների գործողությունը,

6) սույն Հրահանգով ներքին շուկայի սոցիալական ուղղվածության համար, նպատակով գործնական քայլ է կատարվում,

7) «Պոտենցիալ պայթյունավտանգ միջավայրում կիրառության համար նախատեսված սարքերի և պաշտպանական համակարգերին վերաբերող օրենքների ներդաշնակեցման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1994 թվականի մարտի 23-ի 94/9/ԵՀ հրահանգում (5) նշվում է, որ Պայմանագրի 137-րդ հոդվածի հիման վրա նախատեսված է լրացուցիչ հրահանգ մշակել, որը, մասնավորապես, կկարգավորի սարքավորումների տեղադրման կիրառության դեպքերից և (կամ) տեսակներից ու մեթոդներից բխող պայթյունների վտանգները,

8) պայթյուններից պաշտպանությունը հատուկ կարևորություն ունի անվտանգության համար, քանի որ պայթյունները վտանգում են աշխատողների կյանքը և առողջությունը բոցի և ճնշման, նյութերի վնասակար ռեակցիաների առկայության և փակ տարածությունում օդի

շրջանառության պայմաններում թթվածնի օգտագործման անվերահսկելի ազդեցությունների պատճառով, որը շնչում են աշխատողները,

9) պայթյունները կանխարգելելու համապարփակ ռազմավարության հաստատումը պահանջում է, որպեսզի աշխատավայրում կազմակերպական միջոցները լրացնեն տեխնիկական միջոցներին. 89/391/ԵՏՀ հրահանգով պահանջվում է, որ աշխատավայրում գործատուները կատարեն աշխատողների առողջության և անվտանգության ռիսկերի գնահատում. այս պահանջը սահմանվում է սույն Հրահանգում, քանի որ այն պահանջում է, որ գործատուն կազմի պայթյուններից պաշտպանության փաստաթուղթ կամ փաստաթղթեր, որ (որոնք) բավարարում է (են) սույն Հրահանգում սահմանված նվազագույն պահանջները, և այդ փաստաթղթերը մշտապես նորացնեն. պայթյունների պաշտպանության փաստաթղթի մեջ ներառվում են վտանգների սահմանումը, ռիսկերի գնահատումն ու պայթյունավտանգ միջավայրում աշխատողների առողջության և անվտանգության երաշխիքներ ապահովող միջոցները՝ 89/391/ԵՏՀ հրահանգի 9-րդ հոդվածի համաձայն. պայթյուններից պաշտպանության փաստաթուղթը կարող է լինել աշխատավայրում առողջության և անվտանգության ռիսկերի գնահատման մաս, ինչպես պահանջվում է 89/391/ԵՏՀ հրահանգի 9-րդ հոդվածով,

10) պայթյունների ռիսկերի գնահատում կարող է պահանջվել Համայնքի այլ ակտերով. քանի որ աշխատանքի անտեղի կրկնությունից խուսափելու համար գործատուն պետք է իրավունք ունենա փաստաթղթերը, դրանց մասերը կամ Համայնքի այլ ակտերի համաձայն կազմված համարժեք հաշվետվությունները, ազգային պրակտիկայի համաձայն, համատեղել մեկ ընդհանուր «անվտանգության հաշվետվության» մեջ,

11) պայթյունավտանգ միջավայրի առաջացման կանխումը նաև ներառում է փոխարինելի սկզբունքի կիրառությունը,

12) երբ տարբեր կազմակերպությունների աշխատողներն աշխատում են միևնույն աշխատատեղում, պետք է համակարգում տեղի ունենա,

13) կանխարգելիչ միջոցներին անհրաժեշտության դեպքում պետք է լրացնեն լրացուցիչ միջոցները, որոնք արդյունավետ են բռնկման դեպքում. առավելագույն անվտանգության հնարավոր է հասնել, եթե կանխարգելիչ միջոցներին զուգահեռ գործեն լրացուցիչ միջոցներ, որոնք կսահմանափակեն աշխատողների նկատմամբ պայթյունների վնասակար ազդեցությունները,

14) «Աշխատավայրում անվտանգության և (կամ) առողջության վերաբերյալ ցուցանակների տեղադրման նվազագույն պահանջների մասին» Խորհրդի 1992թվականի 92/58/ԵՏՀ հունիսի 24-ի հրահանգը (89/391/ԵՏՀ հրահանգի 16(1) հոդվածի իմաստով՝ իններորդ առանձին հրահանգ) լիովին կիրառելի է, մասնավորապես, այն վայրերի համար, որոնք անմիջականորեն սահմանակից են վտանգավոր տարածքներին, որտեղ ծխելը, կտրելը, եռակցումը և գործունեության այլ ձևեր կարող են բոց կամ կայծ առաջացնել տվյալ վտանգավոր տարածքում,

15) 94/9/ԵՀ հրահանգը տարաբաժանում է իր կարգավորման առարկա սարքավորումները և պաշտպանիչ համակարգերը խմբերի ու կատեգորիաների. այդ հրահանգում պահանջվում է, որ գործատուներն ըստ գոտիների դասակարգեն այն տարածքները, որտեղ պայթյունավտանգ միջավայր կարող է առաջանալ և սահմանեն, թե սարքավորումների ու պաշտպանիչ համակարգերի խմբերն ու կատեգորիաները որ գոտիներում պետք է օգտագործվեն,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ

## **ԲԱԺԻՆ I**

### **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

#### *Հոդված 1*

#### **Նպատակը և գործողության շրջանակը**

1. Սույն Հրահանգը, որը 89/391/ԵՏՀ հրահանգի 16(1) հոդվածի իմաստով 15-րդ առանձին հրահանգն է, սահմանում է պայթյունավտանգ միջավայրից եկող պոտենցիալ վտանգի ենթարկվող աշխատողների անվտանգության ու առողջության պաշտպանության բարելավման նվազագույն պահանջները, ինչպես սահմանված է 2-րդ հոդվածում:

2. Սույն Հրահանգը չի կիրառվում հետևյալի նկատմամբ՝

ա) հիվանդների բժշկական սպասարկման համար կամ դրա ժամանակ անմիջականորեն օգտագործվող տարածքները.

բ) 90/396/ԵՏՀ հրահանգի (7) համաձայն՝ գազային հեղուկներ այրող սարքերի օգտագործումը.

գ) պայթուցիկներ և քիմիական անկայուն նյութերի արտադրությունը, մշակումը, կիրառությունը, պահեստավորումն ու տեղափոխումը.

դ) հանքարդյունահանող արդյունաբերության այն ոլորտները, որոնք կարգավորվում են 92/91/ԵՏՀ հրահանգով (8) կամ 92/104/ԵՏՀ հրահանգով (9).

ե) տրանսպորտային միջոցների տեղափոխումը ցամաքով, ջրով և օդով, որոնց նկատմամբ կիրառվում են միջազգային պայմանագրերի (ՌՎՐՏԿ, ՃՎԱՄՏԵՀ, ՔԱՄԿ, ՄԾԿ, ԵՎԱՄՏՄԿ) և այդ պայմանագրերը գործողության մեջ դնող Համայնքի հրահանգների համապատասխան դրույթները: Պոտենցիալ վտանգ պարունակող միջավայրում կիրառության համար նախատեսված տրանսպորտի միջոցները չեն բացառվում:

3. 89/391/ԵՏՀ հրահանգի և համապատասխան առանձին հրահանգների դրույթները լիովին կիրառելի են 1-ին պարբերության մեջ նշված ոլորտի նկատմամբ՝ չսահմանափակելով սույն Հրահանգում ներառված առավելի խիստ և (կամ) առավել մասնավոր դրույթների գործողությունը:

## *Հոդված 2*

### **Սահմանումը**

Սույն Հրահանգի նպատակներով «պայթյունավտանգ միջավայր» նշանակում դյուրավառ նյութերի խառնուրդը օդի հետ մթնոլորտային պայմաններում գազերի, գոլորշու, խոնավության կամ փոշու տեսքով, որոնց դեպքում բռնկում տեղի ունենալիս կրակը տարածվում է ամբողջ չայրվող խառնուրդում:

## ԲԱԺԻՆ II

### ԳՈՐԾԱՏՈՒԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### Հոդված 3

##### **Պայթյունների կանխարգելումը և դրանցից պաշտպանությունը**

89/391/ԵՏՀ հրահանգի 6(2) հոդվածի իմաստով պայթյունները կանխարգելելու և դրանցից պաշտպանվելու համար, գործատուն պետք է նախաձեռնի տեխնիկական և (կամ) կազմակերպչական միջոցներ, որոնք հատուկ են իր գործունեությանը՝ ըստ առաջնայնության և հետևյալ հիմնական սկզբունքների համաձայն՝

- պայթյունավտանգ միջավայրի առաջացման կանխարգելում, իսկ եթե գործունեության բնույթով դա հնարավոր չէ՝
- պայթյունավտանգ միջավայրի բռնկման խուսափում և
- պայթյունի վնասակար ազդեցությունների մեղմացում՝ աշխատողների առողջությունն ու անվտանգությունը պաշտպանելու նպատակով:

Նման միջոցները անհրաժեշտության դեպքում համատեղվում և (կամ) լրացվում են պայթյունների տարածման դեմ ուղղված միջոցառումներով և պետք է պարբերաբար վերանայվեն, ինչը պետք է կատարվի բոլոր այն դեպքերում, երբ էական փոփոխություններ են տեղի ունենում:

#### Հոդված 4

##### **Պայթյունի ռիսկերի գնահատումը**

1. Գործատուն 89/391/ԵՏՀ հրահանգի 6(3) և 9(1) հոդվածներում սահմանված պարտավորություններն իրականացնելիս գնահատում է պայթյունավտանգ միջավայրից առաջացող հատուկ ռիսկերը, հաշվի առնելով առնվազն՝

- պայթյունավտանգ միջավայրի առաջացման հավանականությունը և դրանց շարունակականությունը.

- բռնկման աղբյուրների՝ ներառյալ էլեկտրաստատիկ արտանետումների առկայությունը և դրանց ակտիվ ու գործող դառնալու հավանականությունը.
- տեղակայումները, օգտագործվող նյութերը, պրոցեսները և դրանց հնարավոր փոխազդեցությունը.
- ակնկալվող ազդեցությունները մասշտաբները:

Պայթյունի ռիսկերը գնահատվում են ընդհանուր կտրվածքով:

2. Պայթյունի ռիսկերը գնահատելիս հաշվի է առնվում, որ կարող են լինել այնպիսի վայրեր, որոնք կապված են այն վայրերի հետ, որտեղ կարող է պայթյունավտանգ միջավայր առաջանալ:

### *Հոդված 5*

#### **Ընդհանուր պարտավորությունները**

Աշխատողների անվտանգությունն ու առողջությունն ապահովելու և ռիսկի գնահատման հիմնական սկզբունքները, ինչպես նաև 3-րդ հոդվածի սկզբունքները պահպանելու նպատակով գործատուն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում, որպեսզի՝

- եթե կարող է պայթյունավտանգ միջավայր առաջանալ այնպիսի մասշտաբով, որ այն կարող է վտանգել աշխատողների և այլ անձանց առողջությունն ու անվտանգությունը, աշխատանքային միջավայրն այնպիսին լինի, որ հնարավոր լինի աշխատանքը կատարել անվտանգ պայմաններում.
- աշխատանքային միջավայրում, որտեղ պայթյունավտանգ միջավայր կարող է առաջանալ այնպիսի մասշտաբով, որ այն կարող է վտանգել աշխատողների անվտանգությունը և առողջությունը, ապահովվում է աշխատողների պատշաճ վերահսկողություն, երբ նրանք գտնվում են աշխատավայրում՝ ռիսկի գնահատմանը համապատասխան և օգտագործելով բավարար տեխնիկական միջոցներ:

## Հոդված 6

### Համակարգման պարտավորությունը

Եթե միևնույն աշխատատեղում աշխատում են մի քանի կազմակերպությունների աշխատողներ, ապա յուրաքանչյուր գործատու պատասխանատվություն է կրում իր վերահսկողության տակ գտնվող խնդիրների համար:

Չսահմանափակելով յուրաքանչյուր գործատուի առանձին պարտավորությունը, ինչպես սահմանված է 89/391/ԵՏՀ հրահանգի համաձայն՝ աշխատողների առողջության և անվտանգության հետ կապված բոլոր միջոցների իրականացումը համակարգելու համար պատասխանատու է աշխատատեղի գործատուն, որը գործում է ազգային իրավունքի և (կամ) պրակտիկայի համաձայն: Գործատուն 8-րդ հոդվածում նշված պայթյուններից պաշտպանության փաստաթղթում նշում է, թե որն է համակարգման նպատակը և նման համակարգում իրականացնելու միջոցներն ու ընթացակարգերը:

## Հոդված 7

### Այն վայրերը, որտեղ կարող են պայթյունավտանգ միջավայրեր առաջանալ

1. Գործատուն դասակարգում է այն վայրերը, որտեղ, ըստ I հավելվածի գոտիների, կարող են պայթյունավտանգ միջավայրեր առաջանալ:
2. Գործատուն ապահովում է, որ II հավելվածում սահմանված նվազագույն պահանջները կիրառվեն 1-ին պարբերությամբ կարգավորվող վայրերի նկատմամբ:
3. Անհրաժեշտության դեպքում, եթե պայթյունավտանգ միջավայրեր կարող են առաջանալ այնպիսի մասշտաբներով, որ դա կարող է վտանգել աշխատողների առողջությունն ու անվտանգությունը, ապա դռան մուտքի մոտ պետք է ցուցանակներ դրվեն՝ III հավելվածի համաձայն:



## Հոդված 8

### Պայթյուններից պաշտպանության փաստաթուղթը

4-րդ հոդվածում սահմանված պարտավորությունները կատարելիս՝ գործատուն ապահովում է, որպեսզի կազմվի փաստաթուղթ, այսուհետ՝ «պայթյուններից պաշտպանության փաստաթուղթ»: Այն մշտապես թարմացվում է:

Պայթյուններից պաշտպանության փաստաթղթի մեջ, մասնավորապես, ցույց է տրվում, որ՝

- պայթյունների ռիսկերը սահմանվել և գնահատվել են.
- պատշաճ միջոցներ կձեռնարկվեն, որպեսզի իրականացվեն սույն Հրահանգի նպատակները.
- I հավելվածի համաձայն՝ ըստ գոտիների դասակարգված վայրերը.
- այն վայրերը, որոնց նկատմամբ կկիրառվեն II հավելվածում սահմանված նվազագույն պահանջները.
- աշխատավայրը և աշխատանքային սարքավորումները՝ ներառյալ նախազգուշական ազդանշանային սարքերը, նախագծվում, գործարկվում և շահագործվում են՝ պատշաճ կերպով հաշվի առնելով անվտանգությունը.
- Խորհրդի 89/655/ԵՏՀ հրահանգի (10) համաձայն՝ միջոցառումներ են ձեռնարկվել աշխատանքային սարքավորումների անվտանգ աշխատանքի համար:

Պայթյուններից պաշտպանության փաստաթուղթը կազմվում է նախքան աշխատանքն սկսելը և վերանայվում է, եթե աշխատավայրը, աշխատանքային սարքավորումները կամ աշխատանքի կազմակերպական ձևը ենթարկվում են էական փոփոխությունների, ընդլայնման կամ վերակազմակերպման:

Գործատուն կարող է համատեղել պայթյունի ռիսկի առկա գնահատումները, փաստաթղթերը և համարժեք այլ հաշվետվություններ, որոնք կազմվել են Համայնքի այլ ակտերի համաձայն:

## Հոդված 9

### **Աշխատանքային սարքավորումների և աշխատավայրերի համար հատուկ պահանջները**

1. Այն աշխատանքային սարքավորումները, որոնք արդեն գոյություն են ունեցել պայթյունավտանգ միջավայրերում կամ որոնք առաջին անգամ, նախքան 2003 թվականի հունիսի 30-ը, հանձնվել են ձեռնարկության կամ կազմակերպության տնօրինությանը , պետք է այդ ամսաթվից սկսած պահպանեն II հավելվածի Ա մասում սահմանված նվազագույն պահանջները, եթե կիրառելի չեն Համայնքի այլ հրահանգներ կամ եթե դրանք մասամբ են կիրառելի:
2. Այն աշխատանքային սարքավորումները, որոնք օգտագործվում են պայթյունավտանգ միջավայրերում և որոնք, նախքան 2003 թվականի հունիսի 30-ը, առաջին անգամ հանձնվել են ձեռնարկության կամ կազմակերպության տնօրինությանը, պետք է այդ ամսաթվից սկսած պահպանեն II հավելվածի Ա և Բ մասերում սահմանված նվազագույն պահանջները:
3. Այն աշխատավայրերում, որտեղ առկա է պայթյունավտանգ միջավայրի հավանականություն և որոնք առաջին անգամ շահագործման են հանձնվել 2003 թվականի հունիսի 30-ից հետո, պետք է պահպանեն սույն Հրահանգում սահմանված նվազագույն պահանջները:
4. Եթե այն աշխատավայրերում, որտեղ կան պայթյունավտանգ միջավայրեր, նախքան 2003 թվականի հունիսի 30-ը դրանք արդեն օգտագործվում են, ապա պետք է պահպանեն սույն Հրահանգում սահմանված նվազագույն պահանջները ոչ ուշ, քան այդ ամսաթվից սկսած երեք տարի հետո:
5. Եթե 2003 թվականի հունիսի 30-ից հետո որևէ փոփոխություն, ընդլայնում կամ վերակառուցում է տեղի ունեցել այն աշխատավայրում, որտեղ կարող են առաջանալ պայթյունավտանգ միջավայրեր, ապա գործատուն անհրաժեշտ քայլեր է ձեռնարկում՝ ապահովելու համար, որ սույն Հրահանգով սահմանված նվազագույն պահանջները պահպանվեն:

### ԲԱԺԻՆ III

#### ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

##### Հոդված 10

#### **Հավելվածների հետ համապատասխանեցված փոփոխությունները**

Ձուտ տեխնիկական բնույթի համապատասխանեցված փոփոխությունները հավելվածներին, որոնք անհրաժեշտ են հետևյալի հետևանքով՝

- տեխնիկական ներդաշնակեցման և ստանդարտացման վերաբերյալ հրահանգների ընդունումը պայթյունների պաշտպանության ոլորտում և (կամ).
- տեխնիկական առաջընթացը, միջազգային կանոնակարգերում կամ մասնագրերում կատարված փոփոխությունները և պայթյունների դեմ պաշտպանության ու կանխարգելման ոլորտում նոր բացահայտումները.

ընդունվում են 89/391/ԵՏՀ հրահանգի 17-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն:

##### Հոդված 11

#### **Լավագույն գործելակերպի ուղեցույցը**

Հանձնաժողովը կազմում է գործնական ուղեցույցներ, որոնք ոչ պարտադիր բնույթ կրող լավագույն գործելակերպի ուղեցույց են: Այս ուղեցույցում բարձրացվում են I և II հավելվածի Ա մասի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածներում նշված թեմաները:

74/325/ԵՏՀ հրահանգի (11) համաձայն՝ Հանձնաժողովն սկզբում խորհրդակցում է Աշխատավայրում անվտանգության, հիգիենայի և առողջության պաշտպանության հարցերով խորհրդատվական կոմիտեի հետ:

Սույն Հրահանգի կիրառության համատեքստում անդամ պետություններն իրենց ազգային ծրագրերը մշակելիս առավելագույնս հաշվի են առնում վերոնշյալ ուղեցույցը՝ աշխատողների առողջության և անվտանգության ապահովման համար:

## Հոդված 12

### **Կազմակերպություններին տրամադրող տեղեկությունները**

Անդամ պետությունները պահանջի դեպքում ջանքեր են գործադրում գործատուներին համապատասխան տեղեկություններ տրամադրելու համար, 11-րդ հոդվածի համաձայն, հատկապես ուշադրություն դարձնելով լավագույն գործելակերպի ուղեցույցին:

## Հոդված 13

### **Եզրափակիչ դրույթները**

1. Անդամ պետությունները գործողության մեջ են դնում սույն Հրահանգի պահանջները կատարելու համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը և վարչական դրույթները 2003 թվականի հունիսի 30-ից ոչ ուշ: Նրանք դրա մասին տեղեկացնում են Հանձնաժողովին:

Երբ անդամ պետություններն ընդունում են այդ միջոցները, դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում ուղեկցվում են նման հղումով: Նման հղում կատարելու մեթոդները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները Հանձնաժողով են ուղարկում ներպետական իրավունքի դրույթների տեքստը, որոնք նրանք արդեն ընդունել կամ ընդունում են սույն հրահանգով կարգավորվող ոլորտում:

3. Անդամ պետությունները սույն Հրահանգի դրույթների գործնական իրականացման մասին հաշվետվություն են ուղարկում Հանձնաժողով յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ՝ նշելով գործատուների և աշխատողների տեսակետները: Հանձնաժողովը դրա մասին տեղեկացնում է Եվրոպական պառլամենտին, Խորհրդին, Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեին ու Աշխատավայրում անվտանգության, հիգիենայի և առողջության պաշտպանության հարցերով խորհրդատվական կոմիտեին:

#### Հոդված 14

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում հրապարակվելու օրվանից:

#### Հոդված 15

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում 1999 թվականի դեկտեմբերի 16-ին:

Եվրոպական պառլամենտի կողմից՝

Նախագահ Ն. Ֆոնտեն

Խորհրդի կողմից՝

Նախագահ Ք. Հեմիլա

1) ՊՏ C 332, 09.12.1995 թ., էջ 10 և ՊՏ C 184, 17.06.1997 թ., էջ 1:

2) ՊՏ C 153, 28.05.1996 թ., էջ 35:

3) Եվրոպական պառլամենտի 1996 թվականի հունիսի 20-ի եզրակացություն (ՊՏ C 198, 08.07.1996թ., էջ 160)՝ հաստատված 1999 թվականի մայիսի 4-ին (ՊՏ C 279, 01.10.1999թ., էջ 55), Խորհրդի 1998 թվականի դեկտեմբերի 22-ի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ C 55, 25.02.1999թ., էջ 45), Եվրոպական պառլամենտի 1999 թվականի մայիսի 6-ի որոշում (ՊՏ C 279, 07.10.1999թ., էջ 386): Եվրոպական պառլամենտի 1999 թվականի դեկտեմբերի 2-ի որոշում և Խորհրդի 1999 թվականի դեկտեմբերի 6-ի որոշում:

4) ՊՏ L 183, 29.06.1989թ., էջ 1:

5) ՊՏ L 100, 19.04.1994թ., էջ 1:

6) ՊՏ L 245, 26.08.1992 թ., էջ 23:

7) ՊՏ L 196, 26.07.1990թ., էջ 15:93/68/ԵՏՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 220, 30.08.1993թ., էջ 1):

8) ՊՏ L 348, 28.11.1992 թ., էջ 9:

9) ՊՏ L 404, 31.12.1992 թ., էջ 10:

10) ՊՏ L 393, 30.12.1989թ., էջ 13: 95/63/ԵՀ հրահանգով (ՊՏ L 335, 30.12.1995թ., էջ 28)

փոփոխված հրահանգ:

11) ՊՏ L 185, 09.07.1974թ., էջ 15: 1994 թվականի «Անդամակցության մասին» ակտով

վերջին անգամ փոփոխված հրահանգ:

**ԱՅՆ ՎԱՅՐԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ, ՈՐՏԵՂ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՌԱՋԱՆԱԼ  
ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՄԻՋԱՎԱՅՐԵՐ**

Նախնական նշում

Դասակարգման հետևյալ համակարգը պետք է կիրառվի այն վայրերի նկատմամբ, որտեղ ձեռնարկվում են նախազգուշական միջոցառումներ՝ 3-րդ, 4-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածների համաձայն:

1. Այն վայրերը, որտեղ կարող են առաջանալ պայթյունավտանգ միջավայրեր՝

Այն վայրը, որտեղ պայթյունավտանգ միջավայրը կարող է առաջանալ այնպիսի մասշտաբով, որ կարող են պահանջվել նախազգուշական միջոցներ՝ համապատասխան աշխատողների առողջությունը և անվտանգությունը պաշտպանելու նպատակով, համարվում է վտանգավոր՝ սույն Հրահանգի իմաստով:

Այն վայրը, որտեղ պայթյունավտանգ միջավայրը չի կարող լինել այնպիսի մասշտաբով, որ պահանջվի ձեռնարկել նախազգուշական միջոցներ, համարվում է անվտանգ՝ սույն Հրահանգի իմաստով:

Պայթյունավտանգ և (կամ) դյուրավառ նյութերը համարվում են այնպիսի նյութեր, որոնք կարող են նպաստել պայթյունավտանգ միջավայրի առաջացմանը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց հատկանիշների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ օդի խառնուրդում դրանք չեն կարող ինքնուրույն կրակ հարուցել:

2. Վտանգավոր վայրերի դասակարգումը

Վտանգավոր վայրերը դասակարգվում են ըստ գոտիների՝ հիմնվելով պայթյունավտանգ միջավայրի առաջացման հաճախականության և տևողության վրա:

II հավելվածի Ա մասի համաձայն ձեռնարկվելիք միջոցների ծավալը որոշվում է սույն դասակարգման հիման վրա:

Գոտի 0

Այն վայրը, որտեղ գազի, գոլորշու կամ օդակաթիլային խառնուրդների տեսքով դյուրավառ նյութերի և օդի խառնուրդից կազմված պայթյունավտանգ միջավայրը շարունակական է կամ պահպանվում է երկար ժամանակ, կամ հաճախ է առաջանում:

## Գոտի 1

Այն վայրը, որտեղ գազի, գոլորշու կամ օդակաթիլային խառնուրդների տեսքով դյուրավառ նյութերի և օդի խառնուրդից կազմված պայթյունավտանգ միջավայրը բնականոն շահագործման ընթացքում հազվադեպ է առաջանում:

## Գոտի 2

Այն վայրը, որտեղ գազի, գոլորշու կամ օդակաթիլային խառնուրդների տեսքով դյուրավառ նյութերի և օդի խառնուրդից կազմված պայթյունավտանգ միջավայրը բնականոն շահագործման ընթացքում չի առաջանում, իսկ առաջանալու դեպքում շատ կարճ է պահպանվում:

## Գոտի 20

Այն վայրը, որտեղ դյուրավառ փոշու ամպի տեսքով պայթյունավտանգ միջավայրը շարունակական է, կամ պահպանվում է երկար ժամանակ, կամ հաճախ է առաջանում:

## Գոտի 21

Այն վայրը, որտեղ դյուրավառ փոշու ամպի տեսքով պայթյունավտանգ միջավայրը բնականոն շահագործման ընթացքում հազվադեպ է առաջանում:

## Գոտի 22

Այն վայրը, որտեղ դյուրավառ փոշու ամպի տեսքով պայթյունավտանգ միջավայրը բնականոն շահագործման ընթացքում չի առաջանում, իսկ առաջանալու դեպքում շատ կարճ է պահպանվում:

## Ծանոթագրություններ.

1. Դյուրավառ փոշու շերտերը, նստվածքները և կույտերը պետք է համարվեն պայթյունավտանգ միջավայրի առաջացման աղբյուր:



2. «Բնականոն շահագործում» նշանակում է այն իրավիճակը, երբ սարքավորումներն օգտագործվում են իրենց նախագծային պարամետրերի շրջանակում:

**Ա. ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊՈՏԵՆՑԻԱԼ ՌԻՍԿԵՐԻ ԵՆԹԱՐԿՎՈՂ  
ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

Նախնական նշում

Սույն հավելվածով սահմանված պարտավորությունները կիրառվում են՝

– I հավելվածին համապատասխան՝ որպես վտանգավոր դասակարգված վայրերի նկատմամբ՝ բոլոր այն դեպքերում, երբ դա պահանջվում է՝ ելնելով աշխատավայրերի, աշխատատեղերի, օգտագործվող սարքավորումների կամ նյութերի բնույթից կամ աշխատանքի առաջ բերած վտանգից՝ կապված պայթյունավտանգ միջավայրերի ռիսկերի հետ,

– ոչ վտանգավոր վայրերի սարքավորումների նկատմամբ, ինչը պահանջվում է վտանգավոր վայրերում գտնվող սարքավորումների անվտանգ շահագործման համար և նպաստում է նման շահագործումն ապահովելուն:

1. Կազմակերպչական բնույթի միջոցառումներ

1.1. Աշխատողների վերապատրաստումը

Գործատուն պարտավոր է այն աշխատողների համար, ովքեր աշխատում են այնպիսի վայրերում, որտեղ կարող են առաջանալ պայթյունավտանգ միջավայր, ապահովել բավարար մակարդակով և համապատասխան վերապատրաստման դասընթացներ՝ պայթյուններից պաշտպանվելու վերաբերյալ:

1.2. Գրավոր հրահանգները և աշխատանքի թույլտվությունները

Պայթյուններից պաշտպանության փաստաթղթով նախատեսված դեպքերում՝

– աշխատանքը վտանգավոր վայրերում պետք է իրականացվի՝ գործատուի կողմից տրամադրված գրավոր հրահանգներին համապատասխան,

– աշխատանքի թույլտվությունները պետք է տրամադրվեն թե՛ վտանգավոր աշխատանքներ կատարելու, և թե՛ այնպիսի աշխատանքներ կատարելու համար, որոնք այլ աշխատանքների հետ փոխազդելու արդյունքում կարող են վտանգ առաջացնել,

Աշխատանքներն սկսելուց առաջ աշխատանքի թույլտվությունները պետք է տրամադրվեն այս գործառույթի համար պատասխանատու անձի կողմից:

## 2. Պայթյուններից պաշտպանության միջոցներ

2.1. Դյուրավառ գազերի, գոլորշիների կամ օդակաթիլային խառնուրդների ցանկացած միտումնավոր կամ ոչ միտումնավոր բացթողման (կամ) արտահոսքի ուղղություն, որը կարող է պայթյունի վտանգ առաջացնել, պետք է համարժեք մակարդակով շեղվի կամ տեղափոխվի անվտանգ վայր, իսկ եթե դա գործնականում անհնար է, պահվի կոնտեյներներում կամ վնասագերծվի այլ համապատասխան մեթոդով:

2.2. Եթե պայթյունավտանգ միջավայրը պարունակում է դյուրավառ և (կամ) պայթյունավտանգ գազերի, օդակաթիլային խառնուրդների կամ փոշիների տարբեր տեսակներ, ապա պաշտպանիչ միջոցները պետք է նախատեսված լինեն հնարավոր ամենամեծ ռիսկերի դեմ:

2.3. 3-րդ հոդվածի համաձայն՝ բռնկման վտանգների կանխման համար պետք է նաև հաշվի առնվեն էլեկտրաստատիկ լիցքերը, եթե աշխատողները կամ աշխատանքային միջավայրը լիցք կրող կամ լիցք արտադրող են: Աշխատողներին պետք է տրամադրվի համապատասխան հագուստ, որը պետք է պարունակի այնպիսի նյութեր, որոնք էլեկտրաստատիկ լիցքեր, որոնք կարող են առաջացնել պայթյունավտանգ միջավայրեր:

2.4. Կայանը, սարքավորումները, պաշտպանիչ համակարգերը և դրանց հետ կապված միացման սարքավորումները պետք է շահագործվեն միայն այն դեպքերում, երբ պայթյուններից պաշտպանության փաստաթղթում նշված է, որ դրանք կարող են անվտանգ օգտագործվել պայթյունավտանգ միջավայրում: Դա կիրառվում է նաև աշխատանքային սարքավորումներին և դրանց հետ կապված միացման սարքավորումներին, որոնք չեն համարվում սարքավորում կամ պաշտպանիչ համակարգեր՝ 94/9/ԵՀ հրահանգի իմաստով, եթե կառուցվածքում դրանք ընդգրկելը կարող է ինքնին բռնկման վտանգի աղբյուր լինել: Պետք է ձեռնարկվեն անհրաժեշտ միջոցներ՝ միացման սարքավորումների տարբերակումն ապահովելու համար:

2.5. Պետք է ձեռնարկվեն բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ապահովելու համար, որ աշխատողներին հատկացված աշխատատեղերը, աշխատանքային սարքավորումները և դրանց հետ կապված միացման սարքերը նախագծվեն, կառուցվեն, հավաքվեն, տեղակայվեն, ինչպես նաև պահպանվեն և շահագործվեն այնպես, որ նվազագույնին հասցվի պայթյունի վտանգը և պայթյունն առաջանալու դեպքում աշխատատեղում և (կամ)

աշխատանքային սարքավորման մեջ դրա տարածումը վերահսկելու կամ նվազագույնին հասցնելու նպատակով: Նման աշխատատեղերի համար պետք է ձեռնարկվեն համապատասխան միջոցներ՝ պայթյունի ֆիզիկական ազդեցությունների՝ աշխատողներին սպառնացող վտանգները նվազագույնին հասցնելու համար:

2.6. Անհրաժեշտության դեպքում՝ աշխատողները պետք է ստանան տեսաշարային և (կամ) ձայնային նախազգուշացումներ և հեռացվեն՝ մինչև պայթյունին նպաստող պայմանները գոյանալը:

2.7. Պայթյուններից պաշտպանության փաստաթղթով նախատեսված լինելու դեպքում, պետք է հատկացվեն և պահպանվեն վթարային ելքի հարմարությունները՝ ապահովելու համար, որ վտանգի դեպքում աշխատողները կարողանան արագ և անվտանգ դուրս գալ վտանգավոր վայրերից:

2.8. Այնպիսի աշխատատեղն առաջին անգամ գործածելուց առաջ, որտեղ կարող են առաջանալ պայթյունավտանգ միջավայրեր, պետք է ստուգվի պայթյուններից պաշտպանության ընդհանուր անվտանգությունը: Պետք է ապահովվեն այն պայմանները, որոնք անհրաժեշտ են՝ պայթյուններից պաշտպանություն ապահովելու համար:

Նման ստուգումները պետք է իրականացվեն փորձի և (կամ) մասնագիտական վերապատրաստման շնորհիվ պայթյուններից պաշտպանության ոլորտում մասնագիտացած անձանց կողմից:

2.9. Ռիսկի գնահատման արդյունքում անհրաժեշտ լինելու դեպքում՝

– եթե հոսանքազրկումն առաջացնում է հավելյալ ռիսկեր, ապա պետք է հնարավոր լինի հոսանքազրկման դեպքում պահպանել սարքավորումները և համակարգերն անվտանգ շահագործման վիճակում՝ կառուցվածքի մնացած հատվածից առանձին,

– պետք է հնարավոր լինի ձեռքով միջամտումը՝ սարքավորումը և պաշտպանիչ համակարգերը այնպիսի ավտոմատ գործընթացների ժամանակ անջատելու համար, որոնք չեն համապատասխան շահագործման նախատեսված պայմաններին՝ պայմանով, որ դա չսպառնա անվտանգությանը: Այդ գործողությունը կարող են անել միայն նման իրավունք ունեցող աշխատողները:

– վթարային անջատման իրականացման ժամանակ կուտակված էներգիան անհրաժեշտ է ցրել հնարավորինս արագ և անվտանգ, կամ մեկուսացնել, որպեսզի այն այլևս որևէ վտանգ չներկայացնի:

## Յ. ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԻՉ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

Սարքավորումները և պաշտպանիչ համակարգերը բոլոր այն վայրերի համար, որտեղ կարող են առաջանալ պայթյունավտանգ միջավայրեր, պետք է ընտրվեն 94/9/ԵՀ հրահանգով սահմանված կատեգորիաների հիման վրա, եթե դիսկի գնահատման վրա հիման վրա կազմված՝ պայթյուններից պաշտպանության փաստաթղթով այլ բան նախատեսված չէ:

Մասնավորապես, նշված գոտիներում պետք է օգտագործվեն սարքավորումների հետևյալ տեսակները՝ պայմանով, որ դրանք հարմար են գազերի, գոլորշու կամ օդակաթիլային և (կամ) փոշիների համար՝

- 0 գոտում կամ 20–րդ գոտում՝ 1–ին կատեգորիայի սարքավորումները,
- 1–ին գոտում կամ 21–րդ գոտում՝ 1–ին կամ 2 –րդ կատեգորիայի սարքավորումները,
- 2–րդ կամ 22–րդ գոտում՝ 1, 2 կամ 3 –րդ կատեգորիաների սարքավորումները:

### ՀԱՎԵԼՎԱԾ III

Նախագգուշացնող նշաններ այն վայրերի համար, որտեղ կարող են առաջանալ պայթյունավտանգ միջավայրեր՝ 7(3) հոդվածի համաձայն:

Այն վայրերը, որտեղ կարող են առաջանալ պայթյունավտանգ միջավայրեր

Տարբերակիչ նշանները՝

- եռանկյունաձև
- սև տառեր դեղին ֆոնի վրա՝ սև եզրագծով (դեղին մասով նշվում է նշանի առնվազն 50%-ը):

Անդամ պետությունները ցանկության դեպքում կարող են ավելացնել այլ բացատրական տեղեկություններ: